

ղակիցն իւր Բարէն: Եւ զգըստերքն իւր Շամս-ղամարն, եւ զորդիքն Մէլիք աղին, Միքայէլն, Խաչիկն, Սիննան, Մէլիք Նիազն եւ զորդի Սուլթանուժին Սաֆարն: Քրիստոս Աստուած ողորմեցի սոցայ ընդ մեծի ողորմութեան իւրում եւ որ յիշէ յիշեալ լինցի առաջի ահաւրէմբին Քրիստոսի եւ նմայ փառք յաւիտեանս ամէն. Հայր մեր:»\*)

Յաջորդ յիշատակարանը իր կարգին պիտի ամբողջացնէ վերի յիշատակարանին պակաս թողուցած տոհմազրութիւնը: Ատիկա Նոր Զուգայու թիւ 477-ին յիշատակարանն է, զոր արդէն ներկայացուցի նախապէս: Հոս կ'ուզեմ զիտել տալ, որ թիւ 36-ի յիշատակութեան համաձայն, 1621-ին Սուլթանի (կամ Սուլթանուժին) որդի Սաֆար ծնած էր միայն, ինչպէս նաեւ Փոսնդուլի մէկ զուտոր՝ Շամսղամար, նոյնպէս Մէլիքաղէի որդիքը՝ Միքայէլ, Խաչիկը, Սիննանը, Մէլիք Նիազը: Իսկ մնացեալները ծնած են 1621-էն վերջ:

Նոր Զուգայու թիւ 477 աւետարանին յետին ստացողի յիշատակարանը, որ արդէն վերը ներկայացուցի, Խօջայ Սաֆարի տոհմին մասին կարեւոր ծանօթութիւններ կուտայ: Հոս կը յիշուի Խօջայ Սաֆար եւ իր կիներ՝ Սուլթանիփաշայ: Վերջնոյս մէկ խաչքարը գտայ Նոր Զուգայու Խօջենց Ս. Գեորգ եկեղեցւոյն քարաչէն խորանին պատուանդանին մէկ երեսին վրայ սապէս —

Խ(ա)ՁԱ Յ(ի)Շ(ա)Տ(ա)Կ Է

ՍՈՒԼԹԱՆ Փ

ԱՇԷ:

Խօջայ Սաֆար ունեցած է չորս որդիներ՝ Մէլիք աղա, Խօջայ Փոսնդուլ, Խօջայ Սուլթան եւ Զալալ Բէկ, հոս տրուած երիցութեան շարքով, եւ աղջիկներ: \*\*)

Մէլիք աղայի մասին իր եղբայրը՝ Զալալ Բէկ իր ծանօթ յիշատակարանին մէջ (թիւ 477

\*) Տես իմ աշխատութիւնս ԻՆԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՁ, ուր մանրամասն այս թիւ 36 ձեռագիրը կը քննուի ու կը նկարագրուի: «Անահիտ», 1939, թիւ 3 էջ 32-44:

\*\*) Հոս Բրիտանական թանգարանի թիւ 8 աւետարանի յիշատակարանին:

ձեռագիր աւետարան) կը գրէ. «...Մէլիք աղին. որ ի հասակս երեք տարի. փոխի առ տէր իւր ցանկալի...»: Սակայն, նոյն ատեն կ'աւելցնէ, որ ան (Մէլիք Աղան) հայրն էր որդւոց եւ զստերաց՝ Պարոն Մուքէլ, Խաչիկ, Սիննան, Խաչում եւ Սուլթանիփաշէ: Հաւանական է, որ Զալալ Բէկ ըսել ուզած ըլլայ թէ՛ իր եղբայրը կը մեռնի իր անթուական յիշատակարանին գրչութենէն երեք տարի առաջ: 1667-ին Աղա Խաչիկի ընծայադրին համաձայն, յուլիս 28-էն առաջ մեռած էր արդէն Մէլիք Աղա:

Նիւ Եորքի 42-րդ փողոցի մատենադարանին մէջ պահուող հայ ձեռագրի մը մէջ (թիւ 1) կայ 94 տուննոց տաղ մը սա խորագրով —

«Յիշատակարան Աստուածաշունչ գրոց արարեալ նոյն Ստեփանոս երէց որդի Ստեփանոսի, ի խնդրոյ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ԱՂԱՅԻՆ որդոյ Խաչայ Սաֆարին»:

Եւ տաղը կը սկսի՝

«Ի քվականիս մեր Հայկազեան,  
Որ էր անցեալ քան յորեիեան,  
Այլ եւքտասն աւելի լման,  
Գրեցաւ շունչս աստուծական»:

Այս առաջին տան մէջ տրուած թուականը կը հասասարի մեր 1621-ին: Տաղին մնացեալ մասը մեզ համար հոս նշանակութիւն մը չունի, սակայն աւելորդ չեմ սեպեր գտնէ այդ երկարաշունչ տաղին վերջի երեք տուները տալ:

«Իսկ ես նուստ անձն անարժան,  
Տէր Ստեփանոս մեղացման,  
Չարեաւք լրցեալ բարեաց ունայն,  
Եւ որ ի կայս քան զամէնայն:  
Այսքան գրոց աստուածական,  
Զոր շարեցի անբանական,  
Զձեզ աղաչեմ որք հանդիպիք,  
Չմեղադրել իմ լրբութեան:

Զի ես տկար եւ սղիսլական,  
Զեռնարկեցի յօժարական,  
Գրեցի գլրկին սուրբ կտակարան,  
Ոտամք չափեալ սուտ Հոմերական»:

Նոր Զուգայու վանքին զիւանին մէջ կայ մեզ հետաքրքրող վաւերաթուղթ մը\*), ուր

\*) Ծանօթութիւնը տեսնել էջ 10-ի վրայ: